«Հետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպություն
Երեւան, Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ:(3741) 563363, 580219, 077484554,
E-mail: info@hetq.am, hetq@hetq.am, URL : www.hetq.am

Գեղարքունիքի մարզի
Զոլաքար համայնքի ղեկավար
Արման Ղազարյանին

պատճենը Տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարար
Սուրեն Պապիկյանին

HETQ.am-ի լրագրող **Տիրայր Մուրադյանից**
(Էլ-փոստ tirayrmuradyan@gmail.com,
հեռ.՝ 077 484-554)

Հարգելի պարոն **Ղազարյան**,

Սույն թվականի փետրվարի 27-ին Զոլաքար համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի որոշումները ստանալու մասին էլեկտրոնային հարցումով դիմել եմ ձեզ, սակայն մինչ օրս՝ 2020 թ–ի ապրիլի 14-ը պատասխան չեմ ստացել:

Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքը գրավոր հարցման համար 5–օրյա ժամկետ է սահմանել, իսկ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկությունների համար՝ 30–օրյա: Իմ ուղարկած հարցման օրվանից անցել է ավելի քան 30 օր:

Ուստի, խնդրում եմ հայցված տեղեկությունները տրամադրել հնարավորինս սեղմ ժամկետներում, որպեսզի ստիպված չլինենք տեղեկությունն ստանալու մեր իրավունքը դատական կարգով իրացնել:

Խնդրում եմ գրությանս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում: Խնդրում եմ ծանուցումը ուղարկել էլեկտրոնային տարբերակով:

Հարգանքով՝ Տիրայր Մուրադյան

14 ապրիլի 2020 թ.: